

ԲԱՏԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՆԱԽԱՐԶԵՑԻ

ՄԱՏԵՆԱԳԻՐ

ՆԵՐՔՈՂԵԱՆՔ, ՅԱՅՄԱՆՈՒՐՔ, ՆԱՄԱԿԱՆԻ

(Շար. Բազմ. 1947 թ. 9-10, էջ 201)

Թէեւ քաղաքական ու եկեղեցական մեր պատմութեան աղմկալից ու փշոտ ասպարէզին մէջ անյաջող եւ անարժէք, դրական մարդին մէջ, ընդհակառական, բաւական արդիւնաւոր եւ կարեւոր դէմք մ'է Անաւարդեցին:

Իր գրութիւնները երկու խումբի պիտի բաժնենք. արձակ եւ չափածոյ:

ԱՐՁԱԿԸ. — Այս ճիւղին մէջ հեղինակն աւելի յաջող է՝ քան երկրորդին: Իր արձակ գրութիւնները խնամուած են. լեզուին եւ ոճին մասնաւոր հոգ տարուած է, առանց մոռնալու երբեմն նոյն դարուն գլխաւոր ինքնայատուկ նկարագիրը յիշեցնել: Յատկապէս ներբողեաններուն մէջ հեղինակին գիտութեան եւ հմտութեան հետ, կը փայլի նաեւ հոգեւորական արուեստը. կը նշմարենք հոն իր եռանդուն ոգին, վառ բարեպաշտութիւնը. զգացմամբ կը գրէ նա, ինքը համոզուած՝ ըզմեզ եւս զիւրաւ կը համոզէ: Շնորհ կայ իր ճառերուն մէջ. անոնց մէջ կարելի է ըսել բանաստեղծ մ'է Գրիգոր, որ իր գրած տեսարաններուն զանազանութեամբ՝ ընթերցողը կը շահագրգռէ, կը մոզէ, կերպով մը կը ստիպէ զմեզ որ սկսած ճառը՝ մէկ շունչով մինչեւ վերջ կարդանք, եւ հաճոյքը կը զգանք զայն կարդացած ըլլալուն:

Իր արձակ գրութեանները երեք խումբի մէջ կ'ամփոփենք. Ներբողեաններ, Յայամաւորք, եւ Նամականի:

Ասոնց իւրաքանչիւրը մէկ մէկ յօդուածով պիտի տեսնենք:

Ա. — ՆԵՐՔՈՂԵԱՆՆԵՐԸ, որոնց առաջինն է, 1. «Դրուատ գովեստի ամենայն սրբոց», գրուած Հեթում Բի խնդրանքով՝ անոր թագաւորութեան հինգերորդ տարին: Բուն վերնագիրն է, «Տօն է ամենապարտաւորութեան եւ ամենայն սրբոց յայտնեաց եւ անյայտիցն, ի սկզբանէ եւ այսր ընտրելոցն Աստուծոյ՝ ի մարդկանէ, ի Գրիգորէ Կաթողիկոսէ ասացեալ զրուատ»: Եւ կը սկսի.

«Կաթողիկէ եւ առաքելական Եկեղեցի սուրբ, ընկալաւ օրէն եւ սահմանադրութիւն, ոչ միայն ի նախկին հարցն եւ ի նախապետ մարդարէիցն սրբոց՝ Ղիշառաւ սրբոց պատուել եւ տօնել ցնծութեամբ... այլ» եւն:

Այս ընդարձակ ճառը, հեղինակին յաջող պերճաբանութեան, ջերմ բարեպաշտութեան եւ ճաշակին՝ իբր նմոյշ կրնայ տուիլ: Այս առթիւ լաւ դիտած է Տաւադայէ: Այս ճառը լի է սրբոց անուններով, աշխատէ որ Յայամաւորքն անուն մը պակաս չէ կարծես. դաս դաս բաժնուած՝ ըստ աստիճանի»⁽¹⁾:

Եւ ստուգել, զայն կարդալով, ինքզինքն ինչ Գրիգորէի գրութիւն կամ իտալ. այն հոգեւորական հանճարներուն նկարած «Արքայ»

(1) Հ. Թ. Տաւադայ, էջ 652, ս. 1:

յութեան» մը գլխաց կը գտնենք, ուր նահապետներէն մինչեւ առաքեալները, մեծամեծ հայրապետներէն մինչեւ շուշանիայի կոյսեր, թագաւորներէ ու զօրականներէ՝ մինչեւ յետին գինուորը Քրիստոսի եւ անմեղուկ մանկիկը, դաս դաս տարմատարմ երամովին, եւ ամէնքն ալ լուսափողիկ ու պսակազարդ՝ աղաւնիներու պէս կը սլանան դէպի վեր՝ Արքայութիւնը չքեղացնելու եւ անոր մէջ փառաւորութիւն:

Հրատարակուած է սոյն Դրուատը «Տէր Իսրայելի» կոչուած Յայամաւորքին մէջ, Կ. Պոլիս, 1834, Յաւելուած՝ էջ 41: Նոյն պէս առանձին տպ. Երուսաղէմ, 1869:

Ներքոյիս ասացեալ ի սրբոց վարդապետաց: Նոյն է նախորդին հետ: Ոմանք⁽²⁾ այս վերնագրէն դատելով՝ համարած են որ առանձին ճառ մ'ըլլայ, բայց կը խաբուին: Չեղարկելով յայտնի կերպով կը յաւելուն «ի պատիւ ամենայն սրբոց». եւ սկզբնաւորութիւնը կը դնեն, «Կաթողիկէ առաքելական Եկեղեցի» եւն: Հետեւաբար յատուկ ճառ մը չէ, այլ մեր վերեւ տեսածը:

(2) Այսպէս Ուրջալտ. Հր. Աճառեան, Հայ Անձ. Բառ. հտ. Ա, էջ 586, թիւ 391: Ասոր վրայ վիճելն անգամ աւելորդ է: Համեմատած եմ այս ներբողեանը մեր ձ. թիւ 1447, Ի. Ճառերուն (էջ 401), նոյնպէս Բ. Յայամաւորքին եւ (թ. 401) Ժէ Յայամաւորքին հետ, ուր կը տեսնենք վերնագրէն դատ՝ ամէն բանով «Ամենայն սրբոց» զրուատին հետ նոյն է: Նոյնը կը տեսնենք նաեւ Տաւադայի էջ 900, ս. 2, ձեռագիր թ. 437, թղ. 161ա: Նոյնը ձեռ. թ. 213, թղ. 33ա, հմմ. Տաւադայի, էջ 542, ս. 1: Անդ, էջ 94, ս. 1. ձեռ. թ. 10, թղ. 118ա: Անհաւանական չէ որ այդ փոփոխութիւնը դիտմամբ եղած ըլլայ Անաւարդեցուն հակառակորդաց կողմէն: Նոյն հոգեբանութեամբ է որ Օշնի Ժամագրքին բաղմաթիւ մագաղաթներն անխնայ կտրեր հանելու, առանց արդահատելու ոչ գեղարուեստին, ոչ հրեւոթեան եւ ոչ ցեղին նուիրական յիշատակներուն. բան մը՝ զոր արդարացի կերպով կ'ողբայ հրատարակիչը: Նոյնը կը տեսնենք 1295ին գրուած մզկթ իւր շարականին մէջ (ձեռ. թ. 154), ուր Զօրավար եւ Ստրատելատ Թէոփորոսներու անաւարդեան կրկին կանոնները պատուած հանած,

2. «ԴՐՈՒԱՏ ՆԵՐՔՈՂԻ ԱՄԻՆ ԻՍԿ ՆԱՄԱԿԱՆԱՅ ԵՄԵԹԻ ԱՆՈՒՐ ՄՈՆԻ ԳՈՎԵՍՏԻ, սուրբ տնօրինականացն Քրիստոսի՝ սրբաւ տեղեացն Երուսաղէմի», «Ի նուաժանէ Գրիգորէ դատապարտ եւ լոկ անուն կաթողիկոսէ Հայոց»⁽³⁾: Եւ կը սկսի Սաղմոսի խօսքով.

«Շրջեցարուք զՍիրուն, գերկս արկէք նմա, համբուրեցէք զաշտարակս նորա. ի ձեռն սրբոյ Հոգւոյն՝ աստուածայինն երգէ մարգարէ: Որով, թէպէտ այսու բանիւ զբարձրագունաւն եւ զիմանալին Սիրուն՝ որ յերկինս է» եւն:

Շատ հոգեւոր զգացմամբ գրուած է: Իր 20 էջնոց լայնածաւալ ընդարձակութեամբ հանդերձ՝ չի դադրիր հետաքրքրական եւ հաճելի ըլլալէ: Հեղինակը Ս. Գրքի բաղմաթիւ եւ յարմար վկայութիւններով՝ կը հաստատէ թէ տնօրինական Ս. Տեղերը պաշտամունքի իրական առարկայ են, եւ իր առաջարկը յաջող կերպով կը ցուցնէ. «Բարձր արարէք զՏէր Աստուած մեր, երկիր պագէք պատուանդանի ոտից նորա՝ զի սուրբ է»: Չանոնք մարդացեալ Բանին եւ Աստուծոյ աթոռին իբր պատուանդան կը նկատէ, ուր հրեշտակներն արդէն «զաս-

միայն հին մանկունքը պահած են: Վերնագրի սոյն փոփոխութիւնն ալ նմանօրինակ կրքերու արդիւնք համարելու է:

(3) Անտիպ է: Տես մեր ձեռագիր. թ. 742, ճառերուն ԼԲ, էջ 100-109բ, Պառ. ձեռ. հմմ. Հ. Բ. Սարգիսեան, հտ. Բ, էջ 496-97: Ուրջալտ. Հր. Աճառեան, Հայ. Անձ. Բառ. հտ. Ա, էջ 559, թիւ 180, անշուշտ սոյն ներբողեանը կ'ակնարկէ «Դրուատ գովեստի տնօրինական տեղեաց Երուսաղէմի» վերնագրով, եւ զայն Գր. Վկայասիրին ընծայելով: Լաւ քննելէն վերջ, համոզուած ենք որ այդ եւս Գր. Անաւարդեցուն է, եւ Վկայասիրին հետ ամենեւին կապ չունի: Օրմանեան, Ազգապատում էջ 1390, թ. 953, Վկայասէր հայրապետին գրական գործերը (չառ քիչ թուով) կը նշանակէ, բայց անոնց կարգին՝ ոչ Աստուածածնի ներբողեանները, ոչ ալ սոյն տնօրինական տեղեաց «Դրուատ»ը կը յիշէ: Ասոր լեզուն եւ ոճը, եւ սկզբի յիշատակութիւնը «Ի նուաժանէ Գրիգորէ դատապարտ եւ լոկ անուն կաթողիկոսէ Հայոց» բացատրութիւնը, միայն Անաւարդեցուն նկարագրերը կը յիշեցնեն եւ ոչ Վկայասէրը:

տուածընկալ տեղիսն առ ի պաշտել եւ ի պատուել երեւէին»։ Որով «երկինք ապա, կ'ըսէ, (ձ. էջ 207) ստուգապէս գտեղին արար (Յիսուս), ուստի ծագեաց մեզ լոյսն յարութեան. մանաւանդ թէ՛ եւ քան զերկինս առաւել, քան զերկիրս բարձրագոյն գտեղին զայն ասեմ, եւ ընդարձակագոյն քան զերկինս երկնից զնա ներբողեմ»։

Եւ ձ. էջ 205. «Այսօր ընդ իս իցես ի դրախտին» խօսքը զնեւէն վերջ, կը գոչէ «վասն որոյ սիրեմ գտեղին ուր այս ասացաւ, եւ անդ կապեալ կամ սրտիւ եւ տըրփանօք սիրոյ բաղձացեալ»։ Տնօրինական տեղիքն ու յիշատակները բոլոր՝ աչքէ կ'անցունին այս ճառին մէջ որ տակաւին լոյս չէ տեսած։

Այս ճառը մեր թ. 742, ԼԲ ձառնորդին մէջ թերի կը մնայ։ Գաղափարողը (ձ. էջ 216) ստորին լուսանցքով կը թեւադրէ, թէ «պակասի յաջորդն՝ զի չէ օրինակեալ»։ Բնագիրին մէջ անշուշտ կայ։ Մեր թ. 710 ձ. չունի դայդ։

3. ՆԵՐՔՈՂԱՆԻ ԾՆՆՈՒԹԵԱՆ Ս. Աստուածածնին, որ են ա) Սեպտեմբեր 7ին՝ Նախատօնակին առթիւ. բ) Սեպտ. 8ին՝ Ս. Կուսին Ծնն. տօնին։ գ) Անվաւերներէ⁽⁴⁾ առնուած՝ Յովակիմ եւ Աննայի, եւ Մարիամով՝ իրենց ամենաչնոր՝ զաւակին ծննդեան պատմութիւնը, իբր շարունակ — կութիւն նոյն օրուան ճառին։ դ) Աւետման ու նոյն ծննդեան խառն ներբող⁽⁵⁾ մը՝ բարդուած նախորդին։ ե) Սեպտեմբ. 9ին, նոյն երջանիկ ծնողաց յիշատակին նուիր-

ուած։ գ) Դրուատ⁽⁶⁾ մը ի պատիւ Տիրա-մօր։

Ասոնց հրատարակութիւնն է ահա որ դեղեցիկ առիթը շնորհեց ինձ, ներկայ յօդուածաշարքով «Բազմավեպ»ի էջերն ըլլալը։ Ո՛չ որովհետեւ ասոնք հեղե-բաղցնելու։ Ո՛չ որովհետեւ ասոնք հեղե-նակին լաւագոյն կամ յաջող դործերն են, նախ ինչպէս կանխաւ ըսուեցաւ, մեր երկալ՝ ինչպէս կանխաւ ըսուեցաւ, մեր երկալ՝ նաւոր պաշտպանին եւ զթառատ մօր՝ հրապարակաւ որդեական երախտագիտու-թեան չնչին ցոյց մը տուած ըլլալու նը-պատկաւ։ Ասոնք, բացի վերջինէն, ԼԲ ձառնորդին մէջ կը կրեն ձԼԷ, ձԼԸ եւ ձԼԹ գլխահամարները, անշուշտ ըստ Պ բնագրին. վերջինը՝ ԼԲ ձառնորդին մէջ չկայ։

Ինչպէս տեսանք, Օ-ին մէջ աւելի հա-մառօտ են ասոնք. թէ համառօտներն են արդեօք հեղինակին հարազատ կամ ըն-դարձակները, եւ թէ Օ եւ Պ ձեռագրաց ո՞րը միւսէն յառաջ եկած է. յաջորդ յօդուածով «Յայտնաւորք» տիտղոսին ներքեւ ծիքը՝ կը հաստատենք նաեւ հետեւեալով։

Երկրորդ ներբողեանի ճակատը կը կար-դանք. «Դրուատ... ի նուստէ Գրիգորէ դանք. «Դրուատ... ի նուստէ Գրիգորէ դատապարտ եւ լոկ անուն կաթողիկոսէ Հայոց»։ Միայն հեղինակը խոնարհութեան համար, կրնար ինքնիրեն այդ նուստա-ցուցիչ խօսքերը դնել, եւ ուրիշ ո՛չ ոք պիտի յանդգնէր Հայրապետի մը այսպէս ըսել։ Հետեւեալը, Պ, եթէ ոչ հարազատ

ձեռագիր բնագիրը՝ դոնէ ուղղակի անկէ յառաջ եկած օրինակ մ'է։

Աստուածածնի ա եւ բ ներբողները՝ կա-րելի է տեսնել թերթիւ 1947, թ. 9-10, էջ 209-12. թէ՛ ասոնք, թէ՛ գ, դ, ե եւ զ՝ արդէն առանձին հատորով ի մօտոյ լոյս պիտի տեսնեն։

Աստուածածնի այս ճառերն՝ անձանօթ էին մեր հին ու նոր մատենագրաց Հ. Մ. Չամչեանի, Հ. Գ. Զարբանալեանի, Հ. Յկ. Տաչեանի, Օրմանեանի եւ Հր. Աճա-ռեանի, որոնք հեղինակին երկերուն հետ չեն⁽⁷⁾ յիշեր զասոնք. միայն Հ. Ղ. Ալի-շան առաջին անգամ ճանչցաւ, եւ անոնց հարազատութիւնն իրաւամբ մեր հեղինա-կին ընծայեց⁽⁸⁾։

Ասոնց դեղեցիկութեան եւ արուեստի դա-տաստանն ընթերցողին թողով, աւելորդ չեմ համարիր սակայն իր ուշադրութիւնը հրաւիրելու նոյնքու աստուածաբանական ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ վրայ։

Մարդեղութեան եւ փրկագործութեան խորհուրդներուն կից, հեղինակը մեր ու-շադրութիւնը կը հրաւիրէ Աստուածամօր անարատ յղութեան վարդապետութեան վրայ, զոր Ընդհանրական Եկեղեցւոյ հետ դաւանած է միշտ եւ քարոզած Հայ եկե-ղեցին, եւ որուն դաւանութեան եւ հա-մոգման՝ լոկ արձագանդ մը կը հանդիսա-նայ Գրիգորը։ Արդ Ուղղափառ Եկեղեցւոյ վարդապետութիւնն այս է. թէ Աստուա-ծածին Կոյս Մարիամ, իր յղութեան առա-ջին վայրկեանէն իսկ, Աստուծոյ ամենա-յատուկ շնորհքով՝ զերծ պահուեցաւ ըս-կըզբնական (կամ աղամական) մեղքէն. որով պատրաստուեցաւ ամբիժ տաճար Աս-տուծոյ Բանին մարդեղութեան։ Այդ վար-

դապետութիւնը որոշ կերպով կը գտնենք մենք հեղինակի թէ՛ Շարականաց, թէ՛ Ներբողեաններուն մէջ։

Շարականները, իրենց դաւանութեամբ՝ չէին կրնար զարտուղի իրենց նախորդնե-րէն, Յակոբ Ա Մեծքարցի կաթողիկոսէն կամ Ժամանակակից Վարդան վրդ. Բար-ձրբերդցիէն, որոնց առաջինը «Երգեցէք որդիք Սիրնի», Ս. Կուսի Ծննդեան, եւ միւսը՝ «Որ նախմաց» յղութեան կանո-նին հեղինակ եղած էր. նոյնպէս ուրիշ հին եւ կամ ԺԲ-ԺԳ դարու վարդապետ-ներ։ Արդ, Յղութեան իր դրած կանոնին Բ տունը «Որ աւետեօք՝ ի Կուսէ — Ծը-նեալ նմանդ ի Հօրէ — Ըզմայր քո քեզ նմանեալ — Այսօր ցուցեր յղացեալ», եւ այլն։ Որուն իմաստն է. ինչպէս Որ-դին՝ Հօր կը նմանի, այսպէս ալ Մա-րիամ՝ իր Որդւոյն կը նմանի ամբօր-թեամբ, իր ստեղծուելուն առաջին վայր-կեանէն. որ է՝ իր յղութեան սկսեալ։ Գ տունը՝ Ս. Կոյսը կը կոչէ «Հորդոյդ չը-նորօք հիմնացեալ»։ այսինքն՝ իր գոյու-թեան հիմը կամ սկիզբը, աստուածային շնորհաց վրայ հաստատուած է։ ԺԶ տու-նը՝ զԱյն կ'անուանէ «Լուծիչ երկանց Ե-ւայի»։ Եթէ լուծիչ է, ուրեմն Եւայի դա-տապարտութեանէն ազատ է։

Ընծայման կանոնին Օրհ. Ա. տունով, հեղինակը շատ յայտնի կ'ըսէ. «Զմիայն ամբիժն յարգանդէ՝ ընտրեալ քեզ հարսն ի յերկրէ»։ Ինքզինքն աւելի որոշ կարելի չէր բացատրել։

Բայց մեր խնդիրը ներբողեաններու վը-րայ է՝ ուր վարդապետութիւնն աւելի բա-ցայայտ դրուած է։

Նախատօնակի ճառին մէջ Երգերգոցի (Ը, 5) «Եւեալ դայ սպիտակացեալ, յենու դայ յեղբորդին իւր», անարատ Յղու-թեան մասին մեկնելով, կ'ըսէ «այսինքն՝ ընդ ծնանին իսկ գոլով յանկ եւ հաղորդ մաքրութեան մարմնոյ սրբոյ Միածնին իւ-րոյ»։ Որ է ըսել, ծնանելուն պէս՝ ո՛չ մի-

(4) Հատուածը, ուսումնասիրութեամբ հան-դերձ պիտի փնտռէք «Բազմավեպ»էն հանել՝ ա-ռանձին պրակով մը, նոր Կտակ. Անվաւեր կամ Անկանոն գրոց իբրեւ լրացուցիչ մաս։

(5) Ս. Կուսի Ծննդեան այս ճառերը Օչնի մեր (ԻԳ) Յայտնաւորքին մէջ (էջ 109-128), ընդ-հանրապէս համառօտ են, ինչպէս ամէն տեղ տար-բերակները նշանակած ենք։ Բայց արդեօք ի ընէ՞ այսպէս էին՝ եւ Բարիգեան տօնապատճառն ըն-դարձակած է զանոնք այնքան ճարտարութեամբ՝ որ լեզուի եւ ոճի բացարձակ նոյնութիւնը կը պահեն. այս մասին մեր կարծիքը պիտի յայտ-

նենք Յայտնաւորքի վրայ խօսելով։ Յամենայն դէպս, Բարիգեան օրինակին (թիւ 46, 88) խնա-մոտ ուսումնասիրութիւն մը, մեծապէս պիտի նը-պատէր, նախ՝ անոր Ժամանակն որոշելու, ըն-դարձակ կամ համառօտ ձեւին հարազատութիւնը գործակ ինչպէս նաեւ, գէթ մօտաւոր կերպով՝ ստուգելու, ինչպէս նաեւ, գէթ մօտաւոր թէ՛ ար-գրելով մատնանիչ ընելու, եւ գիտնալու թէ՛ ար-դեօք հեղինակին բնագրէն է, թէ օրինակողի մը գործ։

(6) Այս վերջին դրուատն առած ենք Օչնի (ԻԳ) Յայտնաւորքէն, էջ 132։ Յատուկ վերնագիր մը չունի։

(7) Հ. Մ. Չամչ. հտ. Գ, 290։ Հ. Գար. Զարբ. տպ. 1932, Յաւելուած՝ էջ 774-775։ Օրմանեան, Ազգապատում, թիւ 1206։ Հ. Յկ. Տաչեան, էջ 1073։ Հր. Աճառեան, Հայ. Անձ. Բառ. հտ. Ա, էջ 586, թիւ 391, եւ ուրիշներ։

(8) Հ. Ղ. Ալ. Հայապատում, Պատմիչք, էջ 299։

այն «յանկ» = յարմար, պատշաճ, վայելիք եւ արժանաւոր էր, այլ նոյն իսկ արդէն «հաղորդ» = մասնակից էր իր Որդւոյն մաքրութեան. այնքան մաքուր էր նա՝ որքան իր Որդւոյն մարմինը:

Նոյն ճառին մէջ՝ զինքը փափկութեան դրախտէն գերադոյն կը դնէ: Կը ցնծանք «այսօր ի ճշմարիտ եւ ի գերադոյն դրախտիս Աստուծոյ՝ ի տնկելն» . ուրեմն անմեղութեան վիճակին մէջ կը ճանչնայ զՍ. Կոյսը, եւ ա՛յդ իսկ է անարատ յղացեալ ըլլալ:

Սեպտ. 8 Ներբողը, Յովակիմ եւ Աննա «Ծնան այսօր Հոգւոյն շնորհաց վտակօք»: Իր դոյութեան առաջին վայրկեանէն «Հոգւոյն (Սրբոյ) շնորհաց առատութեան մէջ ծնած մէկը՝ չի կրնար Աստուծոյ թըշնամութեան մէջ ըլլալ, այլ՝ միայն Անարատ:

Բ ներբող, «Բազմավէպ» 1947, թ. 9-10, էջ 210, ս՝ 1 կը գրէ «Միայն մարդն անարատ եւ աստուածապատկեր», Մարդը բացարձակ առնուած:

Նոյն ճառին մէջ, Աստուծոյ արարչագործութեան հրաշակերտ մը կը նկատուի Մարիամ, եւ իր այդ վեհ գործին աւարտը՝ կը տօնախմբէ ինքն Աստուած, եւ կ'ուրախանայ: Ուր կը յաւելու «Զոր (Ս. Կոյսը) հաւատամք կանուխ ընտրեալ եւ հիմնարկեալ Աստուծոյ եւ յառաջ նկատեալ»:

«Յառաջ», ե՞րբ. լսենք: «Զի եթէ... առաքեալքն ոչ միայն քան զծնունդն, այլ եւ քան զլինելն աշխարհի յառաջ ընտրեցան, ծանի՛ր թէ ապա քանի՛ առաւել սա՛ որ ամենայն մարդարէիցն ընտրութեանն էր պատճառ, եւ բոլոր առաքելական գլխերն նախակոչ լինելոյն՝ կատարումն»:

Բայց թէ իր ծնունդէն ո՞րչափ առաջ ընտրուած էր Ս. Կոյսը, ահա. «Նախ քան զամենայն եւ յառաջ քան զբոլորն ընտրեցաւ, եւ կանուխ առ ի յԱստուծոյ նախատես խորհուրդն սկսեալ եղեւ եւ հիմնացեալ. զոր եւ շինէր զսոյն առ ամենայն

նահապետօքն եւ մարդարէիքն, ի դարս առաջինս, ի բանս եւ յօրինակս նախագութեալս»: Կը հետեւի ուրեմն հեղինակին այդ խօսքերէն, թէ՛ Աստուած, որ այսքան կատարեալ. գերծ, ոչ միայն ներգործական՝ ալ նաեւ սկզբնական մեղքէ, որ միւսին արմատն է:

Կը հրաւիրէ բոլոր մարդկութիւնը ցընծալու Ս. Կուսին ծննդեան համար, զինքը կոչելով «հանուր աշխարհի», «երկրի եւ երկնից ղշխոյ»: Ուրեմն անախտ բնութիւններն ալ, հրեշտակները, Իրմէ նուազ են. իրենց թաղութին է նա, հետեւաբար անոնց մաքրութիւնը՝ գերադոյն աստիճանով ունի:

Աւետման ճառին մէջ՝ խօսքը Տիրամօր ուղղելով, «որ միայն գտար փրկիչ, կը դոչէ, յանիծից ի մեղաց եւ ի մահուանէ»: Անէճքը՝ մեղքի արդիւնք է, մահը՝ երկուքին դառն պտուղ: Արդ մեր հեղինակը զՍ. Կոյսը կը ճանչնայ «փրկիչ» մէկէն ու միւսներէն: Ինչպէս, միթէ բանտարկեալ մը կրնա՞յ իրեն բախտակից մ'աղատել. Ս. Կոյսը «փրկիչ» կոչուելու համար՝ պէտք է նոյն յանցանքէ եւ դատապարտութենէ գերծ ըլլալ: Ա՛յդ է ահա որ Անաւարդեցի հայրապետը կը հաստատէ:

Յովակիմ եւ Աննայի ներբողին մէջ, իրենց երկնապարգեւ զաւակը կը կոչուի «Աստուածատուր շնորհի գործ՝ քան թէ բնութեան օրինաց». եւ թէ՛ «փայլէր ի նա կանուխ եւ յառաջագոյն ի սկզբանդ շնորհին մեծութիւն»: Ուրեմն հրաշալի ծնունդ մ'է այդ, եւ ոչ ուրիշներու պէս սովորական բան մը:

Ոչ նուազ գեղեցիկ է յաջորդ խօսքը «փայլէր ի նա» եւն. այսինքն, այդ Երբորդ Եւայի վրայ՝ եղեմական ամբօն-

թեան փառքը կը փայլէր իր բոլոր մեծութեամբ. ճիշտ այնպէս՝ ինչպէս երբ Աստուծոյ ձեռքէն դեռ նոր էր ելած. կամ լաւ եւս՝ անմեղութեան նախնական վիճակին մէջ էր, եւ ա՛յդ իսկ է Անարատ յղացեալ:

Վերջապէս ահա ուրիշ նախադասութիւն մը՝ ուր Անարատ Յղութեան վարդապետութիւնը շատ որոշ ակնարկուած է. «Յամենեցուն մեղանչելն եւ ի նուազիւն ի փառաց Աստուծոյ, թէ ոչ... Տեսնու զօրութեանց թողեալ էր զնա եւ տուեալ մեղգաւակ (փրկութեան) ... աստուգապէս իրբեւ զՍողոմ լինէաք»: Իմաստը պարզ է. մինչ գետօրէն աճող ու իջող մարդկութիւնն ամբողջ՝ մեղքով ու դատապարտութեամբ կը ծնանէր, Ամենակալն Աստուած՝ զՄարիամ միայն պահած էր այդ միլեդին հեղեղէն. ապա թէ ոչ՝ ամէնքս ալ դրժոխքի ճարակ պիտի ըլլայինք:

Անդրադոյն, գուցէ եւ լաւագոյն մեկնութիւններն իմաստուն ընթերցողին կը թողում, եւ կ'անցնիմ նկատելու ճառերուս ԼԵԶՈՒՆ. — Հայերէնի յատուկ նորութիւն մը չունի: Նոյն դարու բնադրոյմը կը ներկայացնեն հետեւեալ բառերն ու ձեւերը: 1. Դիւրաւուայ, դիւրամտալի, 2. Աստուածապատկեր, Աստուծոյ նման, 3. Խուժ հրէից, խուժան, 4. Օժընդակ, օժանդակ, 5. Հաւանաբար, համոզելով, այնպէս մը ընել՝ որ համոզուի, 6. Հրաշագնապէս, հրաշալի կերպով, 7. Ամլածութիւն, 8. Ընդ ծն. դափնիտեալ, դափնեալ, 9. Թմբկութի, թմբկահար կին, 10. Թերապստութիւն, անհամարձակ, անլըստահ, թերահաւատութիւն, 11. ձիւտ, ճիւտ, 12. Աշխատախոնջ, քրտնջան, 13. Փոխանցիչ, անցնելու միջոց մը, 14. Հպաւորապէս, մերձաւորապէս, եւն.: Ինչպէս ըսի ասոնք անարժէք բաներ են:

Ձեռագրին մէջ միշտ աւ գրուած է. դիւրութեան համար՝ օ դրինք:

Հ. ԳՐ. ՍԱՐԳՍԵԱՆ

(Շարունակելի)

ՄՏԵՓԱՆՈՍ ՆԱՂԱՇ

ԵՐԷՑ ԶՈՒՂԱՅԵՅԻ

Հ. Ն. Վ. Ակինեան «Հանգէս Ամսօրեայ»-ի 1947 Փետրուարի թիւին մէջ կը հրատարակէ «Ստեփանոս Զիք Զուղայեցի»-ի մասին ուսումնասիրութիւն մը, ուր սակայն կը սխալի զայն նոյնացնելով Ստեփանոս Երէց Զուղայեցիի հետ, ծանօթ իբր Բաղաշ կամ մանրանկարիչ: Այս առիթէն օգտուելով կ'ընեմ կարգ մը ճշգրտման, նոյն ատեն բաժնելով Ստ. Նաղաշի ինքնութիւնը Ստ. Զիքէն, եւ տալով առաջինին կենսագրութիւնը՝ որքան որ կարելի է ինծի ծանօթ նիւթերով:

Հ. Ակինեան խօսելով Ստեփանոս Զիքի մասին կ'ըսէ. «Իր ծնողներն են Ստեփանոս եւ Ծն(ր)հաւոր: ... Կնոջ անունն էր Աննա: Կը յիշուին իր զաւակներէն Բարսեղ վարդապետ եւ Յակոբ գրիչ» (անդ, էջ 112):

Նախ պէտք է ըսեմ որ այս Յակոբ գրիչը պէտք է չփոթել Յակոբ գրիչ Զուղայեցիի հետ՝ որմէ ձեռագիրներ հասած են 1592-1607 թուականներով: Ստեփանոս Զիքի որդի Յակոբ գրիչը գուցէ ըլլայ իմ ձեռագրաց հաւաքածոյիս մագաղաթեայ Աստուածաշունչիս Յակոբ Սարկաւազը, որ ընտիր գրչութեամբ գրած է ձեռագիրս 1638ին, ուր սակայն գրիչը մինակ իր անունը կու տայ առանց աւելի մանրամասնութեան:

Գիտնական հայրը Բրիտանական Թանգարանի թիւ 24 Աւետարանը (1608էն Սպահան) եւ Օքսֆորտի Պոտլեան Մատենադարանի թիւ 53 (1609էն Սպահան) Աւետարանը կ'ընծայէ Ստեփանոս Զիքի գրչութեան: Սակայն այդ ձեռագիրներուն յիշատակարաններուն մէջ գրչին մասին